Doi: 10.56737/2953-7843-2025.01-23

ՀԱՍՄԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ԾՈՄԸ ՀԱՅՈՑ ՏՈՆԱԾԻՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹՈՒՄ (ՆԱԽՆԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ)[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սննդից, ջրից, կենցաղավարման որոշ հանգամանքներից ժամանակավորապես հրաժարվելը տարբեր ժողովուրդների ծիսական մշակույթի կարեւոր դրվագներից է եւ ձեւավորվել է կենսական անհրաժեշտությունից ու սնահավատական պատկերացումներից ելնելով[2]: Քրիստոնեության շրջանում այդ երեւույթը վերարժեւորվեց՝ նախեւառաջ վերաբերելով մարդու հոգեւոր աշխարհին, սակայն չբացառելով նաեւ նյութական դրսեւորումները: Այն կոչվում է պահք եւ ունի սահմանափակումների տարբեր ձեւեր եւ աստիճաններ: Գրիգոր Տաթեւացին սննդային պահքի երեք տեսակ է ներկայացնում. պահք, *որի ընթացքում մսից հրաժարվում էին եւ պտղով ու բույսերով էին սնվում,* սրբապահք, *որի ժամանակ զերծ էին մնում տնկիների պարարիչ նյութերից (ձեթ, գինի եւ այլն), եւ* ծոմապահք, *որն ամեն տեսակի ուտելիքից եւ ջրից հրաժարումն էր[3]: Հայերենի բարբառներում պասը եւ ծոմը հաճախ գործածվում են որպես հոմանիշներ, թեեւ իմաստային տարբերություններ ունեն[4]:*

---

[1]* *Ստացվել է՝ 5.03.2025, գրախոսվել է՝ 12.03.2025:*

էլ. հասցե՝ hasmikabrahamyanihasce@gmail.com:

[2] *Հոդվածը գրվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտում իրականացվող «Պասը հայոց սոցիալ-մշակութային համակարգում» գիտական թեմայի շրջանակում՝ բազային ֆինանսավորմամբ:*

[3] *Տես* Գրիգոր Տաթեւացի, *Ճմեռան հատոր, Երուսաղէմ, 1998, էջ 148: Այս տարբերությունները մասամբ ծանոթ են ավելի վաղ՝ Դավիթ Ալավկա Որդու, Մխիթար Գոշի, Հովհաննես Երզնկացու գրվածքներից (տես Հ. Վարդան Վ. Հացունի, Ճաշեր եւ խնճոյք հին հայոց մէջ (այսուհետ՝ Ճաշեր եւ խնճոյք...), Վենետիկ, 1912, էջ 404–405): Պահքի տեսակների եւ ժամկետների մասին տես նաեւ Հ. Վարդան Վ. Հացունի, Ճաշեր եւ խնճոյք..., էջ 402–449,* Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, *Հայ ծիսական պաշտամունք, Պէյրութ, 2001, էջ 74–84: Վանական միաբանություններում պահեցողության եւ ծոմապահության ընդունված կարգերի մասին տես* Լ. Թումանյան, *Վանականության կանոնները եւ ծիսակարգերը հայոց մեջ, Գիրք առաջին, Երեւան, 2023, էջ 151–172:*

[4] *Տես* Հ. Մեսրոպյան, *Կրոնաեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Երեւան, 2016, էջ 186–187, 312: Քանի որ հոդվածն ազգագրական բնույթի է, շարադրանքում*

Սույն հոդվածում քննարկվում են ծոմապահքի ժողովրդական դրսեւորումները, մասնավորաբար՝ ժամկետները, տեսակները, տեւողությունը, ծոմը լուծելու եղանակները՝ համեմատելով եկեղեցական ավանդույթի հետ:

Ծոմապահությունը հայոց եկեղեցական եւ ժողովրդական տոնածիսական մշակույթում եւ կենցաղում ուրույն տեղ ունի: Ծոմապահության ժամկետներ (մեկօրյա, եռօրյա, հնգօրյա, յոթնօրյա, քառասնօրյա) ու դրսեւորման ձեւեր հանդիպում են Սբ. Գրքում[5], պատմիչների երկերում[6],

---

պահքին զուգահեռ, օգտագործվում է նաեւ պաս տարբերակը:

[5] Հին Կտակարանում հետեւյալ դրվագներում ծոմը ջրից, սննդից (Եսթեր, Դ. 16, Զաքարիա, է. 5–6) եւ յուղից (Սաղմոս ՃԸ. (ՃԹ.) 24) հրաժարումն է: Ծոմն ուղեկցվում է ողբով ու լացով (Բ. Թագավորաց, Ա. 12, Նէեմի, Ա. 4, Հովել, Բ. 12–13, Զաքարիա, .է 4–6), գետնին քնելով (Բ. Թագավորաց, ԺԲ. 16), քուրձ հագնելով (Գ. Թագավորաց, ԻԱ. 27, Նէեմի, Թ 1, Սաղմոս, ԼԴ. (Լե) 13, Սաղմոս ԿԸ. (ԿԹ.) 11–12), աղոթելով (Հովել, Ա. 14), գլխին մոխիր լցնելով (Նէեմի, Թ. 1) եւ մարմնական այլ դրսեւորումներով: Ծոմ պահում են մեղքը քավելիս (Ա. Թագավորաց, է. 6), մահացածին սգալիս (Բ. Թագավորաց, Ա. 12), հիվանդի համար առողջություն հայցելիս (Բ. Թագավորաց, ԺԲ. 16), Աստծու օգնությանն ապավինելիս (Նէեմի, Ա. 4, Եսթեր, Դ. 16) եւ այլ դրվագներում:

Եթե Հին Կտակարանում ծոմապահության առանցքում մարմնական դրսեւորումներն են, ապա Նոր Կտակարանում կարեւորվում է ծոմապահության ոչ թե տեսանելի կողմը, այլ հոգեւոր բովանդակությունը (Մատթեոս Զ. 16–18, Թ. 14–15, Մարկ. Բ. 18–20, Ղուկաս Ե. 33–39, ԺԸ. 9–14): Նոր Կտակարանում ծոմապահության դրվագներ հանդիպում են նաեւ Գործք Առաքելոցում (ԺԳ 2–3, ԺԴ. 22, Իէ. 9), Պողոս առաքյալի՝ Կորնթացիներին ուղղված Բ. թղթում (Բ. Կորնթ., Զ. 3–6):

Վերոբերյալ օրինակներում Աստվածաշնչի որոշ հրատարակություններում գրված է ծոմ (տե՛ս, օրինակ, Աստուածաշունչ գիրք Հին եւ Նոր Կտակարանաց Եբրայական եւ Յունական բնագիրներէն թարգմանուած, Կոստանդնուպոլիս, 1921: Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանների, Արեւելահայերէն նոր թարգմանութիւն, Վերահրատարակութիւն, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի եւ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութեան, 1999), որոշներում՝ պահք (տե՛ս, օրինակ, Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ, ի Վենետիկ, 1805): Գիրք Աստուածաշունչք Հին եւ Նոր Կտակարանաց, Ըստ միաբան վաղեմի գրչագրաց մերոյ եւ յոյն բնագրաց, ի Վենետիկ, 1860: Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր Կտակարանաց, Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, 1997):

Նկատի առնելով այն, որ քրիստոնեության սկզբնական շրջանում ծոմը նշանակել է օրական մեկ անգամ սնվել պահքի կերակուրներով, իսկ պահքը՝ առհասարակ ոչինչ չուտել (այս մասին տե՛ս Մաղաքիա Արք. Օրմանյան, *Ծիսական բառարան, Երեւան, 1992, էջ 24, 36: Նույնի՝ Հայոց եկեղեցին, Երեւան, 1993, էջ 205–206:* Ա. Ղազարյան, *Պահք, «Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան» (այսուհետ՝ ՔՀ), Երեւան, 2002, էջ 843), հետեւաբար՝ Սուրբ Գրքի տարբեր հրատարակություններում ծոմ եւ պահք հասկացությունների գործածումը հասկանալու համար բնագրագիտական ուսումնասիրություն է անհրաժեշտ, ինչը սույն հոդվածի նպատակի դաշտում չէ:*

[6] Տե՛ս, օրինակ, Զաքարիա Քանաքեռցի, *Պատմագրություն, Երեւան, 2013, էջ 69,* Ստեփաննոս Տարոնեցի Ասողիկ, *Պատմություն տիեզերական, Երեւան, 2000, էջ 228, 229–230: Նշված աղբյուրներում հիշատակվում են միաբանների ծոմապահության դրվագներ:*

մեկնություններում[7], գեղարվեստական գրականության մեջ[8], ճանապարհորդական գրառումներում[9], ԺԹ. դարի մամուլում[10], հուշագրություններում[11], ազգագրական սկզբնաղբյուրներում եւ այլուր:

Կանոնագիտական գրվածքներում ծոմապահության վերաբերյալ հրահանգները հիմնականում վերաբերում են տոնական եւ ծիսական կարգերին[12]: Մեզ հայտնի ամենավաղ թվագրվող աղբյուրը, որտեղ ծոմը հիշատակվում է պահքից զատ, Հովհան Մանդակունու է. կանոնն է, ուր խոսվում է Պենտեկոստեից առաջ ծոմապահք պահելու կարգի մասին[13]:

---

[7] Սբ. Գրքի մեկնություններում հաճախ են անդրադառնում Աստվածաշնչի ծոմապահության երեք մեծ դրվագներին՝ Մովսեսի (Ելից գիրք, ԼԴ. 28), Եղիա մարգարեի (Դ. Թագավորաց, ԺԹ. 6–8), Հիսուսի (Մատթ. Դ. 1–11, Մարկ. Ա. 12–13, Ղուկ. Դ. 1–13) քառասնօրյա ծոմապահություններին, որոնք կապում են երեք քառասնորդաց (հիսնակաց) պահքերի հետ (տե՛ս, օրինակ, ՀՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ, Թուղթ պահքի պնդության մասին, «Գանձասար», Գ., Երեւան, 1993, էջ 138, «Մեկնութիւն սրբոյ Աւետարանին, որ ըստ Մատթէոսի, արարեալ ի սրբոյն ՆԵՐՍԻՍԷ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ մինչ ի համարն 17. հինգերորդ գլխոյն. եւ անտի աւարտեալ յերանելւոյն ՅՕՀԱՆՆՈՒ ԵՐԶՆԿԱՑԻՈՅ՝ որ կոչի ԾՈՐԾՈՐԵՑԻ», Կ Պոլիս, 1825, էջ 363, ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 653:

[8] Տե՛ս, օրինակ, ՐԱՖՖԻ, Սալբի, Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1962, էջ 76–77, ՐԱՖՖԻ, Կայծեր, Մասն Ա., Երկերի ժողովածու, հտ. Դ., Երեւան, 1956, էջ 256, 266–267, Պ. ՊՈՌՇՅԱՆ, Շահեն, Երկերի ժողովածու, հտ. Բ., Երեւան, 1962, էջ 501–502, Պ. ՊՈՌՇՅԱՆ, Կովածաղիկ, Երկերի ժողովածու, հտ. Գ., Երեւան, 1963, էջ 345, ՄՈՒՐԱՑԱՆ, Առաքյալը, Համաշխարհային գրականություն պատանիների համար, Երեւան, 1989, էջ 532, Ղ. ԱՂԱՅԱՆ, Սերը արտաքսված, Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1962, էջ 272, 288, ՆԱՐ-ԴՈՍ, «Բարերար եւ որդեգիր», Վիպակներ, Երկերի ժողովածու, հտ. Ա., Երեւան, 1989, էջ 359: Այս խումբ աղբյուրներում վկայվում են տոնածիսական եւ կենցաղային դրվագներին առնչվող ծոմապահության դեպքեր:

[9] Տե՛ս, օրինակ, Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, 4, Թուրքական աղբյուրներ, Գ., Է. ՁԵԼԵԲԻ, Երեւան, 1967, էջ 257:

[10] Տե՛ս օրինակ, ՄԿՕ, Վանայ ծովի կղզիները, «Արձագանք», Թիֆլիս, 1882, թիւ 20, էջ 313:

[11] Տե՛ս, օրինակ, Տ. ՓԻՐՈՒՄԵԱՆՑ, Պատկերներ Վասպուրականի հայոց կեանքից (իմ յիշողութիւններից), Թիֆլիս, 1888, էջ 108–109:

[12] Տե՛ս, օրինակ, Սահակ Ա. Պարթեւ կաթողիկոսի (387–439 թթ.) անվամբ հայտնի «Թէ որպէս սահմանեցաւ կարգ ուխտի եւ որոշման վանաց» կանոնախմբի Խ. կանոն (տե՛ս Կանոնագիրք Հայոց, աշխատասիրությամբ՝ Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻ, հտ. Ա., Երեւան, 1964, էջ 397: Կանոնախմբի թվագրման մասին տե՛ս Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, Հայոց Տոնացույցը (4–18-րդ դարեր), Երեւան, 1999, էջ 45–57): Կան նաեւ այլ դրվագներ, ինչպես, օրինակ, հեթանոսների մոտ գերեվարությունից վերադառնալուց հետո՝ ապաշխարության շրջանում, որը թելադրվում է Պարտավի Բ. ժողովի (768 թ.) ԻԳ. կանոնով (տե՛ս ԱԲԷԼ ԱՐՔ. ՄԽԻԹԱՐԵԱՆ, Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց Եկեղեցւոյ, Վաղարշապատ, 1874, էջ 98: «Կանոնագիրք Հայոց»-ում «Կանոնք Սիոնի Հայոց Կաթողիկոսի» անվամբ ընդգրկված այս ժողովի՝ արդեն ԻԲ. կանոնում հիշատակվում է ոչ թե ծոմ, այլ՝ պահք (տե՛ս Կանոնագիրք Հայոց, հտ. Բ., աշխատասիրությամբ Վ. ՀԱԿՈԲՅԱՆԻ, Երեւան, 1971, էջ 16–17):

[13] Տե՛ս Կանոնագիրք հայոց, Ա., էջ 497–498:

Եկեղեցական ավանդույթի համաձայն՝ ծոմապահություն հրահանգվում է Սբ. Հաղորդությունից առաջ[14], բացառությամբ առողջապես տկարների, հղիների, երեխաների[15]: Ծոմապահ պիտի լինի նաեւ այն հոգեւորականը, որը պատրաստվում է մոտենալ Սբ. Խորհրդին, այսինքն՝ Պատարագ մատուցել եւ հաղորդություն բաշխել[16]:

Հայոց Եկեղեցու Տօնացոյցի տարբեր խմբագրություններում[17], որոշ Տօնապատճառներում[18] ամրագրված է պահք *ձեւակերպումը (տարվա շուրջ 160 օրը սննդային պահք է[19]), իսկ ծոմ, որպես առանձին միավոր, չի հանդիպում[20], ըստ ամենայնի, քանի որ այն պահքի դրսեւորումնե-*

---

[14] *Հաղորդությանն առավոտյան անոթի՝ ծոմապահությամբ մոտենալու ավանդույթը սկսել է տիրապետել Դ. դարում (այս մասին տե՛ս Հայ մատենագիրները Սբ. Հաղորդության խորհրդի մասին (Ե.–ԺԸ. դարեր), աշխատասիրությամբ* Յ. ՔԷՈՍԷԵԱՆԻ, *Սբ. Էջմիածին, 2021, էջ 7–8):*

[15] *Հայ Եկեղեցու հայրեր, Է.,* ՎԱՐԴԱՆ ԱՅԳԵԿՅԻ, *Ա. Խրատ քահանաներին եւ ժողովրդին, Ս. Էջմիածին, 2008, էջ 25, Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու յոթ խորհուրդները, կազմող՝* Շ. ԴԱՎԹՅԱՆ, *Երեւան, 1992, էջ 45,* ԶԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, *100 հարց Ս. Հաղորդության մասին, Երեւան, 2014, էջ 64:*

[16] *Բ. Առաքելական կանոնների ԾԹ. կանոնը հրահանգում է քահանային շաբաթ եւ կիրակի ծոմ պահել (տե՛ս «Երկրորդ Առաքելական կանոնիս (Կղեմէս)», Կանոնագիրք Հայոց, Ա., էջ 91: Կանոնների թվագրության մասին տե՛ս* Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, *նշ. աշխ., էջ 59): Այս հրահանգը հավանաբար վերաբերում է այն ժամանակին, երբ բացի կիրակիից, շաբաթ օրերին եւս պատարագ է մատուցվել (տե՛ս Հայ Եկեղեցւոյ Պատարագի օրերն ու տեսակները, ի Հ.* ՎԱՐԴԱՆԱՅ ՀԱՅՈՒՆԻՈՅ, *Վենետիկ, 1898): Հովհան Օձնեցու Ա. կանոնով հոգեւորականին հրահանգվում է, որ եթե «յարբեցութեան գտեալ՝ մի՛ իշխեսցէ պաշտել զկարգն», մինչեւ ապաշխարությամբ, պահքով եւ աղոթքով չսրբվեն, այլապես կարգալույծ կլինի (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա., էջ 516–517): Ազգային-եկեղեցական ժողովի կարգավիճակ չունեցող Սսի Բ. ժողովի (1243 թ.) Ե. կանոնով հոգեւորականին հրահանգվում է խորհրդակատարությունից առաջ ծոմ պահել՝ բացառությամբ մահվան վտանգի առջեւ կանգնածին հաղորդելը (*ԱԲԷԼ ԱՐՔ. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ, *նշ. աշխ., էջ 123, հմմտ.* ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ, *Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, էջ 1900–1901):*

[17] *Տե՛ս, օրինակ,* Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, *նշ. աշխ., էջ 41, 212–213, 228–29, 270–278, 420–490, 613–639: Չի հանդիպում նաեւ Տօնացոյցի՝ Սիմեոն Երեւանցու խմբագրած տարբերակում (տե՛ս Տօնացոյց, աշխատասիրությամբ* ՏԵԱՌՆ ՍԻՄԷՈՆԻ *յօգնաջան եւ սրբազան Կաթուղիկոսին Ամենայն Հայոց, Էջմիածին, 1774–1775):*

[18] *Վարդան Հաղբատեցու, Վարդան Արեւելցու, Հովհաննես Գանձակեցու խմբագրած տոնապատճառներում «Պատճառք Առաջաւորաց» խորագրով մեկնությունում այս պահքի շրջանում հայոց մեջ ծոմ պահելու մասին չի հիշատակվում, (տե՛ս* ՏՕՆԱՊԱՏՃԱՌ ԺՈՂՈՎԱԾՈՒ. *Վարդան Հաղբատեցու, Վարդան Արեւելցու, Հովհաննես Գանձակեցու խմբագրությունները (այսուհետ՝* ՏՕՆԱՊԱՏՃԱՌ ԺՈՂՈՎԱԾՈՒ*), հրատարակության պատրաստեց՝* Ա. ՕՀԱՆՋԱՆՅԱՆԸ, *Ս. Էջմիածին, 2016, էջ 281–286):*

[19] ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, *Հայոց եկեղեցին, էջ 215:*

[20] *Ծոմը հիշատակվում է Հայ Առաքելական եկեղեցու տարբեր թեմերի օրացույցներում, որոնք Հայոց Եկեղեցու տոներին զուգահեռ ընդգրկում են քույր եկեղեցիների կամ այլ կրոնների տոները՝ հիշատակելով նաեւ դրանց նախորդող ծոմի մասին (օրինակ՝ Մոսկվա-*

րից է: Մաղաքիա արք. Օրմանյանը գրում է, որ «ծոմը, իբրեւ պահքին յաւելուած», սահմանված է Առաջավորաց եւ Մեծ պահքերի յուրաքանչյուր յոթնյակի առաջին հինգ օրերին, շաբաթ եւ կիրակի օրերից բացի, իսկ մյուս պասերը ծոմ չունեն[21]: Եթե պահքը պարտադիր է քրիստոնյայի համար, ապա ծոմը կամավոր է[22]:

ԾՈՄԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՆԱՑՈՒՅՑՈՒՄ

Ըստ ուսումնասիրողների՝ ծոմը հայերենում փոխառյալ բառ է[23]: Հայոց մեջ, լինելով համընդհանուր երեւույթ, ծոմ *բառն ունի բարբառային տարբերակներ.* ծում[24], ձում[25], զօմ/զոմ[26], ծօմ[27], փէհրիզ[28], փեհրիզ, օրուն[29], օրուչ *(մահմեդականների ծոմ[30]): Ուրֆայում Սբ. Սարգսի եռօրյա ծոմապահու-*

յում տպագրված 1835 օրացույցում հուլիսի 2-ի համար սահմանված է. «Սրբոյն Զաքարիայ մարգարէին: Ռ. Այցելութիւն Սրբոյն կուսին (Հ. Ծոմ վասն առմանն Երուսաղէմի»): Հ.-ն նշանակում է հունաց, Ռ.-ն՝ Ռուսաց (տե՛ս Օրացոյց 1835 ամի Տեառն եւ ՌՄՁԴ Հայոց թուականի, ի Մոսկով, 1834, էջ 32):

[21] *Տե՛ս* Մաղաքիա արք. Օրմանեան, *Հայոց Եկեղեցին, էջ 206, նույնի՝ Միսական բառարան, էջ 24:*

[22] Գ. Աղանեանց, *Կարգ աստուածապաշտութեան Հայաստանեայց ս. Եկեղեցւոյ, Թիֆլիզ, 1904, էջ 127,* Հ. Վարդան Վ. Հայունի, *Ճաշեր եւ խնճոյք..., էջ 410:*

[23] *Ծոմ բառն իր համարժեքներն ունի եբրայեցերենում՝ ձօմ, ասորերենում՝ սում, արաբերենում՝ սէվմ եւ այլ լեզուներում (տե՛ս* Գ. Աւետիքեան *եւ ուրիշներ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա., Վենետիկ, 1836, էջ 1023,* Հր. Աճառեան, *Հայերեն արմատական բառարան, հտ. Բ., Երեւան, 1926, էջ 467,* Երուանդ Վրդ. Տէր-Մինասեանց, *Հայոց Եկեղեցու յարաբերութիւնները ասորւոց եկեղեցիների հետ (հայկական եւ ասորական աղբիւրների համաձայն), Բ. հրատ., էջմիածին, 2009, էջ 36–37,* Անդրանիկ Ծ. Վրդ. Կռանեան, *նշ. աշխ., էջ 76):*

[24] Մ. Առաքելեան, Ռ. Ղահրամանեան, *Նմուշներ Լեռնային Ղարաբաղի ժողովրդական բանահյուսությունից, Երեւան, 1978, էջ 213,* И. Орбели, Мокс и его обитатели, Избранные труды в двух томах, т. I, II, Ереван, 2002, *էջ 255, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի արխիվ (այսուհետ՝ ՀԱԻ արխ.),* Գ. Հալաջեանի *ֆոնդ, Դերսիմի ազգագրություն, 1960, Ցուցակ 3, Գործ 20, էջ 2276:*

[25] Ս. Վարդանեան, *Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը եւ երգարվեստը, Երեւան, 2009, էջ 202–203:*

[26] Ստ. Մխիթարեան, *Հայերէնէ թրքերէնի փոխառեալ բառեր, «Բիւրակն», ԺԶ տարի, 1898, թիւ 45–46, 17 դեկտեմբեր,* Կ. Պոլիս, *էջ 789,* Մ. Քէլէշեան, *Սիս-մատեան. Պատմական, բանասիրական, տեղագրական, ազգագրական եւ յարակից պարագաներ, Պէյրութ, 1949, էջ 452:*

[27] Ա. Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան, Երեւան, 2013, էջ 321:*

[28] Գ. Աւետիքեան *եւ ուրիշներ, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտ. Ա., էջ 1023:*

[29] Մանուէլ Վրդ. Ջահջահեան, *Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, 1837, էջ 730:*

[30] Ռաֆֆի, *Կայծեր, Մասն Բ., Երկերի ժողովածու, հտ. Ե., Երեւան, 1963, էջ 163:*

թյունն անվանվել է ճկոտակ[31]։ Ծոմ է կոչվում նաեւ չորպասը, որն առանց կաթնեղենի խիստ պահեցողություն է[32]։ Սակայն չորապահք կոչվում է նաեւ շաբաթապահքը[33]։ Ծոմ բառն ունի նաեւ հետեւյալ հոմանիշները՝ սուգ, կուրդ[34]։ Ուշագրավ է, որ սգո առիթներով ծոմապահության բազում օրինակներ կան Սբ. Գրքում, ինչպես նաեւ հայ միջնադարյան աղբյուրներում[35]։ Ծոմի մեջ լինելը բնորոշվում է ծոմապահել, ծոմել[36], ծում կէնալ[37], ںում փեռնուշ[38] բառերով։ Ծոմը բնորոշող բառեր են ծոմականը՝ ծոմի հատուկ[39], ծում լազգին՝ խիստ քչակեր[40], ծոմվոր՝ ծոմը պահելու օրերին եկեղեցի գնացող եւ ծոմը պահող անձ[41]։ Ծոմարձակ ալմայա կիտէիմ արտահայտությունը նշանակում է Սբ. Սարգսի պահքի ընթացքում ամբողջ շաբաթ ծոմապահելուց հետո հաղորդվել[42]։ Ծոմբացի երթալ նշանակում է ծոմը լուծելու համար հացկերույթի գնալ[43], իսկ ծոմբացումն էլ Սբ. Սարգսի պահքին երեք օր ծոմ պահող հարսնացուի ծոմը լուծելու համար նշանածի ընտանիքի կողմից ուղարկված քաղցրավենիքն է[44]։ Ծոմապահության շրջանը լրանալուց հետո առաջին անգամ ուտելը, կոչվել է խթում, խթել, խթում էնել[45], ծոմարձակ[46]։

---

[31] Ա. Սահակեան, Դիւցազնական Ուրֆան եւ իր հայորդիները, Պէյրութ, 1955, գլուխ Ժ., Յաւելուածներ, Բառարան Ուրֆայի գաւառաբարբառի, էջ 45։

[32] Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետ՝ ՀԼԲԲ), հտ. Դ., Երեւան, 2007, էջ 432։ Մանուէլ վրդ. Ջահջահեան, նշ. աշխ., էջ 730։

[33] ՀԼԲԲ, հտ. Դ., էջ 430։ Շաբաթապահքը, մի քանի բացառություններով, տեւում է հինգ օր՝ երկուշաբթիից ուրբաթ (մանրամասն տե՛ս Մաղաքիա արք. Օրմանեան, Ծիսական բառարան, էջ 32, Ա. Ղազարեան, նշ. աշխ., էջ 844)։

[34] Տե՛ս Երեմիա Մեղրեցի, Բառգիրք Հայոց, քննական բնագիրը, առաջաբանը եւ ծանոթագրությունները՝ Հ. Ամալեանի, Երեւան, 1975, էջ 153)։

[35] Տե՛ս, օրինակ, Հ. Վարդան Վ. Հացունի, Ճաշեր եւ խնճոյք..., էջ 446–447։

[36] Պետրոս վրդ. Ճիզմէճեան, Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան, Հալէպ, 1957, էջ 634։

[37] Ա. Սարգսյան, նշ. աշխ., էջ 321։

[38] Ս. Վարդանյան, նշ. աշխ., էջ 202–203։

[39] Պետրոս վրդ. Ճիզմէճեան, նշ. աշխ., էջ 634։

[40] Ա. Սարգսյան, նշ. աշխ., էջ 321։

[41] Տե՛ս ՀԼԲԲ, հտ. Բ., Երեւան, 2002, էջ 419։

[42] Ա. Յ. Աջվաջեան, Յուշիկք բիւթանականք, Արկոտենէնն ու գաւառաբարբառք, «Մասիս», Կ. Պոլիս, 1888, թիւ 3909, էջ 441։

[43] Բալու. իր սովորույթները, կրթական ու իմացական վիճակը եւ բարբառը (այսուհետ՝ Բալու...), աշխատասիրեց Յարութիւն Քէնց. Սարգիսեան (Ալեւոր), Գահիրէ, 1932, էջ 439։

[44] Կ. Գաբիկեան, Բառգիրք Սեբաստահայ գաւառալեզուի, Երուսաղէմ, 1952, էջ 278։

[45] Վահան. վրդ. Տէր-Մինասեան, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հտ. Բ., Կ. Պոլիս, 1904, էջ 18։ Բալու..., էջ 425, ՀԱԻ արխ., Գ. Հալաջյանի ֆոնդ, էջ 2260–2261։

[46] Ա. Յ. Աջվաջեան, նշ. աշխ., էջ 441։

Ծոմը խախտելը բնորոշվել է ծում խուտ[47], ծոմը բացել[48], ծոմը կոտրել[49], ծոմը խոռել *բառերով*[50]:

Ծոմի տեսակները: *Ինչպես եկեղեցական ավանդույթի համաձայն է ծոմը պահքի խիստ տեսակ, նույնն է ժողովրդական ընկալումներում, ինչը փաստվում է ԺԹ. դարի կեսերի Ի. դարասկզբի ազգագրական սկզբնաղբյուրներով: Ժողովրդի տոնածիսական կյանքում եղել է երկու տեսակի ծոմապահություն. առաջինը՝* միաժումն է[51] *(նաեւ* ծոմապաս[52], անժում[53]), *որի ժամանակ օրվա ընթացքում մեկ անգամ՝ կեսօրին կամ երեկոյան սնվել են պահոց կերակուրներով եւ ջուր խմել: Ուշագրավ է, որ քրիստոնեության վաղ շրջանում նույնպես ծոմապահությունը ենթադրել է սննդից եւ ջրից հրաժարում առավոտից մինչեւ երեկո, որից հետո թույլատրվել է պահքի սնունդ ընդունել՝ սնվելով օրական մեկ անգամ: Ժամանակի ընթացքում ծոմի օրերին երեկոյան ժամերգությունն սկսել է կատարվել կեսօրին մոտ*[54]: *Ներսես արք. Մելիք-Թանգյանը Բ. Առաքելական կանոնների ԾԹ. կանոնը մեկնաբանելիս գրում է, որ շաբաթ եւ կիրակի օրերը ծոմ պահելը մինչեւ Պատարագն էր, հետո թույլատրվում էր պա-*

---

[47] *ՀԱԻ արխ., Գ. Հալաջյանի ֆոնդ, էջ 2276:*

[48] Պ. Բեդիրյան, *Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, Երեւան, 2011, էջ 632:*

[49] Ա. Սուքիասյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երեւան, 1975, էջ 305:*

[50] Ռ. Կ. Սաքապետոյան, *Կրոնա-եկեղեցական եւ ծիսական բառերը արեւմտահայերենում, Էջմիածին, 2003, ժ.–ԺԱ., էջ 103:*

[51] *Ծում նշանակում է անգամ (տե՛ս ՀԼԲԲ, հտ. Բ., էջ 163): Միաժումը նշանակում է նաեւ ծոմ, օրվա ընթացքում մեկ անգամ ուտելը (տե՛ս ՀԼԲԲ, հտ. Դ., էջ 54,* Ն. Մամիկոնյան, *Հազարից մեկը, վեպ, Թիֆլիս, 1893, էջ 239): Միաժումը հայտնի է Արարատում, Մուշում, Կարսում, Խարբերդում, Զմյուռնիայում (տե՛ս ՀԼԲԲ, հտ.Դ, էջ 54), Ջավախքում (տե՛ս* Ե. Լալայեան, *Ջաւախք, Նշանաւոր տօներ, Ազգագրական հանդէս (այսուհետ՝ ԱՀ), գք. Բ., Թիֆլիս, 1897, էջ 250), Սիսիանում (տե՛ս* Ե. Լալայեան, *Սիսիան. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, Նշանաւոր տօներ, ԱՀ, գք. Գ., Թիֆլիս, 1898, №1, էջ 250), Աշտարակում (տե՛ս* Պ. Պռոշեան, *Սոս եւ Վարդիթեր, Երեւան, 1987, էջ 310–311), Ներքին Բասենում (տե՛ս* Գ. Հակոբեան, *Ներքին Բասենի ազգագրությունը եւ բանահյուսությունը, Երեւան, 1974, էջ 227), Թալինի ներքին Բազմաբերդ գյուղում (տե՛ս* Հ. Խաչատեան, *Տոնը եւ տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, Երեւան, 2009, էջ 130):*

[52] *Ծոմապասը Երեւանի բարբառում նշանակում է օրական միայն մեկ անգամ ոչ մսային եւ յուղային կերակուր ուտելը (տե՛ս ՀԼԲԲ, հտ. Բ., էջ 419):*

[53] *Անժումը որոշ բարբառներում նշանակում է անժամանակ (տե՛ս, օրինակ,* Հ. Յ. Հուլոնեան, Հ. Մ. Հաճեան, *Յուշամատեան Խոտորջուրի, Վիեննա, 1964, էջ 428, ՀԼԲԲ, հտ.Ա., Երեւան, 2001, էջ 59):*

[54] *Տե՛ս* Մ. Օրմանեան, *Հայոց Եկեղեցին, էջ 205–206: Ծոմը լուծելու ժամանակի մասին տե՛ս նաեւ* Վարդան Հայոնի, *Ճաշեր եւ խնճոյք..., էջ 418–420:*

սը լուծել գինով, ձեթով եւ կերակրով եւ մինչեւ երեկո անօթի չմնալ[55]։ Այսինքն՝ օրվա ընթացքում ծոմապահության ժամկետը կրճատվել է։ Կեսօրին կամ երեկոյան սնվելու հանգամանքով կարելի է բացատրել միաժում ծոմն անժում, այսինքն՝ անժամանակ, անվանելը։

Մյուսն անվաղ ծոմապահությունն է, որի ընթացքում միայն ջուր են խմել[56]։

Սակայն հանդիպում է ծոմապահության տեսակ, որի ընթացքում նաեւ ջրից են հրաժարվում։ Այն պահում են Սբ. Սարգսի պահքի ուրբաթ օրը, եւ հանդիպում է գրեթե ամենուր, հատկապես երիտասարդների շրջանում։ Վերջիններս ողջ օրը ջուր չեն խմում, իսկ երեկոյան աղի բլիթ («շոռ կուկու» [57]) են ճաշակում՝ երազում ապագա կողակցից ջուր ստանալու ակնկալիքով։ Որոշ վայրերում չորեքշաբթի երեկոյից սկսած մինչեւ ուրբաթ երեկո[58], իսկ որոշ վայրերում՝ ամբողջ շաբաթ[59] երիտասարդները ջուր չեն խմել՝ ցանկալի երազը տեսնելու ակնկալիքով։

Վերը տեսանք, որ եկեղեցական ավանդույթի համաձայն՝ ծոմը հրամայվում է միայն Առաջավորաց պահքին եւ Մեծ պահքի ընթացքում՝ բոլոր երկուշաբթի–ուրբաթ օրերին։ Ուշագրավ է, որ հայոց ավանդական կենցաղում եւս ծոմապահության ամենատարածված ժամկետները եղել են Առաջավորաց եւ Մեծ պահքերի շրջանները։ Սակայն ծոմապահություն հանդիպում է նաեւ Սբ. Ծննդյան, Վարդավառի, Սբ. Հակոբի եւ տաղավար տոներին նախորդող պահքերի ընթացքում եւ այլ տոնածիսական ժամկետներում ու կենցաղային դրվագներում։ Թեեւ այս տոներին նախորդող պահքերի ընթացքում եկեղեցական ավանդույթը ծոմ չի հրահանգում, սակայն «Սեբերիանոսի ի Ղուկայ Աւետարանին Մեկնութենէ բան Ա.» Կանոն Ա.-ն (ԺԱ. դ.) Սբ. Ծնունդից առաջ ընկած ութօրյա ծոմապահու-

---

[55] Տե՛ս Ներսէս ԱՐՔ. Մելիք-Թանգեան, Հայոց եկեղեցական իրավունքը, Էջմիածին, 2011, էջ 100։

[56] Տե՛ս Խորիսեցի, Ս. Սարգսի պահքը Քղիի մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, ԺԶ. տարի, թիւ 8, 1898, փետրվարի 5, էջ 122, Ս. Խ. Տէվլէթեան, Յուշեր Շապին Գարահիսարէն, Փարիզ, 1954, էջ 39, Գր. Գալուստեան, Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն, Բ. հրատ., Նիւ Եորք, 1988, էջ 334, Ս. Մկրտչեան, Հայոց տոնածիսական մշակույթ, Երեւան, 2016, էջ 42։

[57] Ե. Կարապետեան, Սասուն, Ազգագրական հետազոտություններ, Երեւան, 1962, էջ 123։

[58] Մ. Դանիէլեան, Ս. Սարգսի պահքը Խիանի մէջ, «Բիւրակն», Կ. Պոլիս, 4 հուլիսի, 1900, էջ 406, Վահան Վրդ. Տեր-Մինասեան, Անգիր դպրութիւն եւ հին սովորոյթներ, հտ. Բ., Կ. Պոլիս, 1904, էջ 50–51։

[59] Երգեր, առակներ, հանելուկներ, թերահաւատութիւններ... Խոտրջրոյ, հաւաքեց Հ. Մ. Հ. Գաւառացի, Տփխիս, 1904, էջ 130։

թյան մասին է խոսում[60], իսկ Դավիթ Ալավկա Որդին (ԺԱ.–ԺԲ. դդ.) իր «Կանոնական օրինադրութիւն» աշխատության Ղ. կանոնում Սբ. Ծննդյանը, Զատկին եւ Վարդավառին նախորդող երեք հիսնակների ընթացքում նաեւ ծոմ պահել է հորդորում[61]։

Ծոմ՝ Առաջավորաց պահքի ընթացքում կամ Սբ. Սարգսի ծոմ։ *Վերը տեսանք, որ ծոմը հիշատակող կանոնները թվագրվում են Զ. դարի կեսերից սկսած՝ հասնելով մինչեւ ԺԲ. դարը (Սահակ Ա. Պարթեւից մինչեւ Դավիթ Ալավկա Որդի), սակայն դրանցում Առաջավորաց պահքի ծոմը չի հիշատակվում այն դեպքում, երբ այդ պահքը մեզանում հաստատվել է դեռեւս Ե. դարում՝ Տօնացոյցի երկրորդ՝ Հովհան Ա. Մանդակունու կատարած խմբագրությունում[62]։ Առաջավորացը նախորդում է Սբ. Սարգսի հիշատակի օրվան[63]։ Վերջինս սահմանել է Հովհան Գ. Օձնեցին[64], եւ նշվում է հունվարի 18-ից մինչեւ փետրվարի 23-ն ընկած շրջանում[65]։ Ժողովրդական տոնացույցում Առաջավորաց պահքը հայտնի է նաեւ Սբ. Սարգսի պաս, Զոր պաս, Սբ. Սարգսի ծոմ, Փետրվարի ծոմ[66], Խաշիլի պաս[67], իսկ մատենագրության մեջ՝ նաեւ Նինվեացվոց պահք[68]*

---

[60] *Տե՛ս Կանոնագիրք հայոց, հտ. Բ., էջ 288–289։ Կանոնն առկա է Կանոնագիքր ԺԱ. դարի խմբագրության մեջ (տե՛ս անդ, էջ* XXVIII*)։*

[61] *Տե՛ս* Ա. Աբրահամյան, *Դավիթ Ալավկա Որդու կանոնները, «Էջմիածին», 1953, Գ., էջ 54–55։*

[62] *Տե՛ս* Ռ. Վարդանյան, *նշ. աշխ., էջ 106, 616–617։ Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում հիշատակվում է վաթսունվեցօրյա պահք՝ Հռիփսիմյանց վկայարանները կառուցելուց եւ Տրդատ արքային ու այլ ախտահարվածներին բժշկելուց առաջ, եւ մեկամսյա պահք՝ մկրտությունից առաջ՝ (տե՛ս* Ագաթանգեղոս, *Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը եւ ծանոթագրությունները՝* Ա. Տեր-Ղեւոնդյանի, *Երեւան, 1983, էջ 408, 462)։ Սբ. Սարգսի վկայաբանությունը շարադրել է Ներսես Շնորհալին, ով նույնպես ծոմ չի հիշատակում (տե՛ս Պատմութիւն վարուց Սրբոյն Սարգսի զօրավարի, թարգմանեալ ի* Ներսիսէ Շնորհալւոյ, *Վենետիկ, 1854, էջ 11–53)։ Առաջավորաց հնգօրյա անսվաղ պահքը Գրիգոր Լուսավորչին վերագրելը սկսվել է Զենոբ Գլակից, ում հետեւել են մյուս պատմիչները (տե՛ս* Վարդան Հայոուին, *Ճաշեր եւ խնճոյք..., էջ 438–439)։*

[63] *Եկեղեցական ծիսակարգի համաձայն՝ սրբերի համար սահմանված է ոչ թե տոն, այլ հիշատակի օր։ Սակայն քանի որ հոդվածն ազգագրական բնույթի է, ուստի հիշատակի օրվան զուգահեռ՝ օգտագործում ենք նաեւ ժողովրդական տարբերակը, այն է՝ Սբ. Սարգսի կամ Սբ. Հակոբի տոն։*

[64] *Տե՛ս* Ռ. Վարդանյան, *նշ. աշխ., էջ 201, 432–433։*

[65] *Տե՛ս* Ս. Մկրտչյան, *նշ. աշխ., էջ 38։*

[66] Հ. Խաչատրյան, *Տոնը եւ տոնահանդեսի մշակույթը Հայաստանում, էջ 133։*

[67] Ե. Լալայեան, *Վարանդա. Նշանաւոր տօներ, Աշ, գք. Գ., էջ 340,* Ե. Լալայեան, *Գանձակի գաւառ, Աշ, գք. Զ., Թիֆլիս, 1900, էջ 363–364։*

[68] *Տե՛ս* Ռ. Վարդանյան, *նշ. աշխ., էջ 433, 619, 622,* Տօնապատճառ Ժողովածու, *էջ 281–286։ Նինվեացիների պահք անվանումը կապված է այն բանի հետ, որ Առաջավորաց պահքի*

անվանումներով։ Սբ. Սարգսի պահքին պահել են թե՛ միաժում, թե՛ անսվաղ ծոմ։

Առաջավորաց պասի հինգ օրերին պաս պահելը համընդհանուր է եղել, սակայն այդ ընթացքում ծոմապահության ժամկետները տարբեր են եղել՝ ա) ծոմապահություն ամբողջ շաբաթվա ընթացքում, բ) ծոմապահություն շաբաթապասի առաջին երեք օրերին, գ) ծոմապահություն շաբաթապասի վերջին երեք օրերին։

Հայոց որոշ ազգագավառներում ծոմն սկսել են կիրակի երեկոյան, տեւել է մինչեւ չորեքշաբթի երեկո, կամ, ընդհակառակը, սկսել են չորեքշաբթի առավոտյան եւ շարունակել մինչեւ շաբաթ առավոտ, այսինքն՝ երեք օր[69]։ Զնգուշում, օրինակ, թե՛ եռօրյա, թե՛ հնգօրյա ծոմն է տարածված եղել։ Սբ. Սարգսի պահոց շաբաթին շատերը, մանավանդ ամուրի աղջիկները, եռօրյա, ոմանք մինչեւ հնգօրյա միաժում (երկուշաբթի առավոտից կամ կիրակի կեսգիշերից մինչեւ ուրբաթ կեսգիշեր) ծոմ են պահել[70]։ Դերսիմում էլ երեքից վեց, նաեւ՝ յոթ օր են ծոմ պահել[71]։ Սբ. Սարգսի պասին յոթնօրյա ծոմապահություն նաեւ Իջեւանում է եղել. «Սըփ Սարքսին յոթ օր սոված կենին, հաց չի ուտին»։ Իսկ ութերորդ օրը՝ երեկոյան, աղջիկները եւ տղաներն պետք է աղաբլիթ ուտեին[72]։ Ենթադրելի է, որ խոսքը նույն հնգօրյա ծոմապահության մասին է, սակայն յոթնօրյա է կոչվել, քանի որ սկսվել է ոչ թե Առաջավորաց պասի երկուշաբթիից, այլ դրան նախորդող կիրակի երեկոյից եւ ավարտվել շաբաթ օրն առավոտյան՝ Սբ. Սարգսի տոնի պատարագից

ուրբաթ օրը Նինվեացիների հիշատակի օրն է (այս մասին տե՛ս Ռ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, *նշ. աշխ., էջ 201, 432–433)։*

[69] *Տե՛ս* Հ. ԽԱՌԱՏՅԱՆ, *Հայ ժողովրդական տոները, Երեւան, 2005, էջ 65–66։*

[70] Գ. ԳԷՈՐԳԵԱՆ, *Զնգուշապատում. քննական պատմութիւն հայոց Զնքուշի, Տեղագրական-պատմագրական-մշակութային-բանահիւսական-ազգագրական, հտ. Ա., Երուսաղէմ, 1970, էջ 435, 466։*

[71] Գ. Ս. ԵՐԵՒԱՆԵԱՆ, *Պատմութիւն Զարսանճագի հայոց, Պէյրութ, 1956, էջ 79, 83։ Լ. Սիմոնյանը, համեմատելով Սբ. Սարգսի վկայաբանության՝ Ներսես Շնորհալու եւ Հայսմավուրքի պատումները, գրում է, որ Հայսմավուրքում սրբի վարքի վերաբերյալ ավելացված են որոշ մանրամասներ, ի թիվս որոնց՝ հնգօրյա եւ յոթնօրյա ծոմապահությունը (տե՛ս* Լ. ՍԻՄՈՆՅԱՆ-ՄԵԼԻՔՅԱՆ, *Տոմարային ծիսաշար, հտ. Բ., Սբ. Սարգիս, Տըրնդեզ, Բարեկենդան, Երեւան, 2007, էջ 9)։ Յոթ օր ծոմ պահելու մասին ավանդազրույցը տե՛ս* Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *Սբ. Սարգիսը ժողովրդական բանավոր ավանդության մեջ, «Սբ. Սարգիս» նստաշրջանի նյութեր, խմբագիրներ՝* Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, *Երեւան, 2002, էջ 34։*

[72] Է. ԽԵՄՋՅԱՆ, *Իջեւան (Զորոփոր), «Հայ ազգագրություն եւ բանահյուսություն» մատենաշար (այսուհետ՝ ՀԱԲ), պր. 25, Երեւան, 2008, էջ 359։*

հետո։ Հանդիպում է նաեւ երկօրյա ծոմապահություն, որը չորեքշաբթի է լուծվել։ Առաջավորաց պահքի երեքշաբթի օրվանից սկսյալ, հատկապես այն աղջիկները, որոնք բարի խըսմէթի *են ապասել, մինչեւ չորեքշաբթի օրը ծոմ են պահել*[73]*։ Ուշագրավ է, որ ծոմն առավոտից կամ երեկոյից սկսելու ժողովրդական այս սովորույթը իր համարժեքն ունի նաեւ եկեղեցական ծիսակարգում՝ կապված տարբեր պահքերի եւ տոների եւ առհասարակ՝ եկեղեցական օրվա սկզբի հետ։ Վերջինս միջնադարում այն ծիսական խնդիրներից է եղել, որոնք արծարծվել են միջեկեղեցական տարաձայնություններում*[74]*։*

Ամբողջ շաբաթ *միաժում կամ անսվաղ ծոմ են պանել Գյումրիում*[75]*, Ջավախքում*[76]*, Մուշում*[77]*, Սիսիանում*[78]*, Վարանդայում*[79]*, Խիանում*[80]*, Ապարանում*[81]*, Բորչալուում*[82]*, Թալինում*[83]*, Խոտորջուրում*[84]*, Ակնում*[85]*, Դերսիմում*[86] *եւ այլուր։ Փերիայում աղջիկները եւ կտրիճներն իրենց* մուրատին *հասնելու համար Սբ. Սարգսի պասի շաբաթը, սովորաբար երկուշաբթիից մինչեւ շաբաթ օրը, ծոմ են պահել, իսկ հետո հաղորդվել են*[87]*։ Քղիում Սբ. Սարգսին շաբաթական ծոմ են պահել ոմանք՝ մինչեւ ցերեկ, ոմանք՝ մինչեւ երեկո, ոմանք էլ ողջ շաբաթվա մեջ միայն մեկ օր են կերել*[88]*։*

---

[73] Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն հայ կեսարիոյ (տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն), հտ. Բ., Գահիրէ, 1937, էջ 1761։*

[74] Կիրակոսի Վարդապետի Երզնկացիոյ *թուղթ առ կարնեցիս, աշխատասիրութեամբ* Աւետիս Քէշեշեան, Դանիէլեանի, *«Գանձասար», 1996, Զ., էջ, 573,* Հ. Պ. Էսապալեան, *Դիոնեսիոս Բարսալիբիի հակաճառութիւնը հայոց դէմ, «Հանդէս Ամսօրեայ», Վիեննա, 1937, թիւ 6–8, էջ 312–318,* Անդրանիկ Ծ. Վրդ. Կոանեան, *նշ. աշխ., էջ 327։*

[75] Յ. Խօջաեանց, *Գիւմրի, «Արարատ», էջմիածին, 1871, փետրվար, էջ 346։*

[76] Ե. Լալայեան, *Ջաւախք, Հաւատք. պասերը, ուխտ, ուխտագնացութիւն, Աշ, գք. Ա., Շուշի, 1895, էջ 371,* Ե. Լալայեան, *Ջաւախք. Նշանաւոր տօներ, Աշ, գք. Բ., էջ 250։*

[77] Իգիթբաշի, *Ս. Սարգսի տօնը Մշոյ հայերի եւ քիւրդերի մէջ, «Արձագանք», Թիֆլիս, 1895, թիւ 18, էջ 2։*

[78] Ե. Լալայեան, *Սիսիան. Նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, գք. Գ., էջ 250։*

[79] Ե. Լալայեան, *Վարանդա. Նշանաւոր տօներ, Աշ, գք. Գ., էջ 340։*

[80] Մ. Դանիէլեան, *նշ. աշխ., էջ 404–406։*

[81] Ս. Մաշտեսի-Իսաակեան, *Ապարանի ներկայ վիճակը, «Մուրճ», Թիֆլիս, 1901,* N *10, էջ 53։*

[82] Ե. Լալեան, *Բորչալուի գաւառ. Նշանաւոր տօներ, Աշ, գք. Ժ., Թիֆլիս, 1903, էջ 256։*

[83] Ռ. Խաչատրեան, *Թալին, ՀԱԲ, պր.19, Երեւան, 1999, էջ 240։*

[84] Հ. Յ. Հուլունեան, Հ. Մ. Հաճեան, *նշ. աշխ., էջ 157։*

[85] Վ. Բդոյան, *Երկրագործական մշակույթը Հայաստանում, Երեւան, 1972, էջ 445։*

[86] *ՀԱԻ արխ., Գ. Հալաջյանի ֆոնդ, էջ 1245, 1248։*

[87] Ա. Երեմեան, *Սպահանի Փէրիա գաւառը (Ազգագրութիւն), Նոր-Ջուղա, 1919, էջ 116։*

[88] Խուիփսեցի, *նշ. աշխ., էջ 122։*

Հանդիպում է նաեւ շաբաթական անսվաղ ծոմապահություն, որը չորեքշաբթի ընդհատվում է՝ եկեղեցի գնալով, ապա պահոց կերակուրներ ուտելով *եւ հինգշաբթիից սկսած՝ շարունակվում է՝ ավարտվելով շաբաթ օրը՝ հաղորդություն ստանալով*[89]*։ Հարկ է նշել, որ եկեղեցական ծիսակարգում պահքերի, նաեւ՝ Առաջավորաց պահքի ընթացքում սննդային պահքը չի լուծվում, իսկ ծիսական պահքը լուծվում է, եթե զուգադիպում է Տերունական կամ սրբերի տոնի*[90]*։*

Հանդիպում է մի քանի դրվագ, որտեղ գուշակության ծեսը եւս չորեքշաբթի է կատարվել։ Բուլանըխում Սբ. Սարգսի շաբաթական պասի առաջին երեք օրերին ազապ տղաները եւ աղջիկները մինչեւ երեկո միաժում ծոմ են պահել, ապա աղի բաղարջ են կերել՝ երազում ապագա կողակցից ջուր ստանալու իղձով[91]*։ Ուշագրավ է, որ ասորիների Նինվեացվոց պահքը համընկնում է հայոց Առաջավորաց պահքին։ Նինվեացվոց պահքի առաջին երեք օրերը Մբբիեթթայի՝ ծոմի օրեր են, որի ժամանակ նաեւ ջուր չեն խմում*[92]*։ Ժամկետային այս համընկնումը եւ ծոմ բառի՝ ասորական ծագման մասին տեսակետը (ինչպես ծիսական մի շարք այլ բառեր)*[93]*, հայկական եւ ասորական ծոմապահքերի միջեւ ընդհանրություններ տեսնելու տեղիք են տալիս։*

Որոշ վայրերում եռօրյա ծոմ *են պահել շաբաթվա սկզբում կամ վերջին*[94]*։ Եզդիները նույնպես Սբ. Սարգսի պահոց մեջ երեք օր ծոմ (ռոժի*[95]*) են պահել*[96]*։*

---

[89] *Տե՛ս, օրինակ,* ԽՈՒՓՍԵՑԻ, *նշ. աշխ., էջ 122։*

[90] *Տե՛ս* ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆՅԱՆ, *Ծիսական բառարան, էջ 36։*

[91] ԲԵՆՍԷ, *Բուլանըխ կամ Հարք գաւառ, Աստուածութիւն եւ սրբեր, ԱՀ, գք. Զ., էջ 22,* ՍԱՀԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ (ԲԵՆՍԷ), *Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, պր. 3, Երեւան, 1972, էջ 43։*

[92] *Այս տեղեկությունը մեզ հաղորդեց Հայաստանում Արեւելքի Ասորական եկեղեցու հոգեւոր առաջնորդ Տեր Նիկոդիմ քահանա Յուխանաեւը։*

[93] *Տե՛ս* ԵՐՈՒԱՆԴ ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆՑ, *նշ. աշխ., էջ 36–37։*

[94] *Տե՛ս, օրինակ,* Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ, *Գիւղաշխարհ, պատմական, ազգագրական ուսումնասիրութիւն, Փարիզ, 1927, էջ 155,* Ա. ԱԼՊՈՅԱՃԵԱՆ, *Պատմութիւն հայ Կեսարիոյ, հտ. Բ., էջ 1748,* Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ, *Հայնի. տեղագրական, ազգագրական. պատմագրական, Պէյրութ, 1951, էջ 81,* Կ. ԳԱԲԻԿԵԱՆ, *նշ. աշխ., էջ 277–278, Պատմագիրք յուշամատեան Սեբաստիոյ եւ գաւառ հայութեան, հտ. Բ., կազմեց* ԱՌԱՔԵԼ Ն. ՊԱՏԲԻԿ, *Նիւ Ճըրզի, 1983, էջ 138։ Եռօրյա ծոմ հաստատելու մասին ավանդազրույցը տե՛ս* Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *նշ. աշխ., էջ 33։*

[95] Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, *նշ. աշխ., էջ 44։*

[96] ԲԵՆՍԷ, *Բուլանըխ կամ Հարք գաւառ, Աստուածութիւն եւ սրբեր, ԱՀ, գք. Զ., էջ 23։*

Առաջավորաց պասի առաջին երեք օրերին *ծոմ պահել են Ղարադաղում*[97], *Զեյթունում*[98], *Բուլանըխում*[99] *եւ այլուր։ Բյութանիայում ծոմարձակ են եղել Առաջավորաց պասի չորեքշաբթի կեսօրին*[100]*։ Էվէրէկ-Ֆէնէսէի կանայք, աղջիկները ծոմ են պահել երեք օր, մինչեւ չորեքշաբթի, իրենց խնդրածի կատարման համար*[101]*։*

Ծոմապահությունը եղել է նաեւ Առաջավորաց պահքի վերջին երեք օրերին՝ *չորեքշաբթի երեկոյից մինչեւ շաբաթ առավոտ, եւ լուծվել է Սբ. Սարգսի տոնի օրը՝ պատարագին մասնակցելուց հետո Հաղորդություն ստանալով։ Այդպիսի օրինակներ հանդիպում են Պայպուրթում*[102], *Սասունում*[103], *Քղիում*[104] *եւ այլուր։ Սալմաստում Առաջավորաց պահքի վերջին երեք օրերին՝ չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, ծոմ են պահել, վերջին օրվա երեկոյին փոխինդ են կերել, իսկ շաբաթ առավոտյան Հաղորդություն վերցրել*[105]*։ Եւդոկիայում Սբ. Սարգսի պահքի վերջին երեք օրերին աղջիկները ծոմ են պահել եւ շաբաթ առավոտ Սբ. Հաղորդություն են ստացել*[106]*։ Խիանում հնուց եկած սովորության համաձայն, երեք-չորս տարեկան աղջիկներն ու տղաները Սբ. Սարգսի պահքի հինգշաբթի երեկոյան ուտելուց հետո ծոմ բերան են մնացել, մինչեւ շաբաթ առավոտ*[107]*։ Բարջանճում եւս վերջին երեք օրերին տանտիկինները ծոմ են պահել եւ հացի առատության հետ կապված գուշակություն արել*[108]*։*

Ծոմբացի ավանդույթները*։ Սբ. Սարգսի պահոց ընթացքում ծոմից դուրս գալու արարողությունն առանձնահատուկ է եղել երիտասարդների, մասնավորաբար՝ նշանված աղջիկների համար։ Այն եղել է չորեքշաբթի կամ շաբաթ։ Փեսացուի տանից հարսնացուները ծումշէֆ են ստացել, որը բաղկացած է եղել համադամ կերակուրներից (օրինակ՝ հացեձվա-*

---

[97] Ռաֆֆի, *Խաչագողի հիշատակարանը, Երկերի ժողովածու, հտ Բ, Երեւան, 1962, էջ 565։*

[98] Մ. Սիսեռեան (Մ. Ուլնեցի), *նշ. աշխ., էջ 202։*

[99] Սահակ Մովսիսյան (Բենսէ), *Հարք (Մշո Բուլանըխ), էջ 43։*

[100] Ա. Յ. Այվազեան, *նշ. աշխ., էջ 441։*

[101] *Յիշատակարան Էվէրէկ-Ֆէնէսէի, հաւաքեց* Ա. Գրիգորեան, *աշխատասիրեց* Ս. Գարակէօզեան, *Փարիզ, 1963, էջ 494։*

[102] Վահան վրդ. Տէր-Մինասեան, *նշ. աշխ., էջ 50։*

[103] Ե. Կարապետյան, *նշ. աշխ., 1962, 204 էջ։*

[104] Խուրփսեցի, *նշ. աշխ., էջ 122–123։*

[105] Ա. Աթայեան, *Սալմաստ, Նոր Ջուղա, 1906, էջ 182։*

[106] Ա.Ալպոյաճեան, *Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952, էջ 1526։*

[107] Մ. Դանիէլեան, *նշ. աշխ., էջ 406։*

[108] Մանուկ Պ. Ծերոն Բարջանճցի, *Բարջանճ գիւղ. համայնապատում (1600–1937), Պոստոն, 1938, էջ 125։*

ծեղ), քաղցրավենիքից (հիմնականում՝ ռուպով պատրաստված հալվա, հայրա՝ մեղրաձրով ըմպելիք) եւ նվերից։ Ստացված ուտեստով հարսնացուի տանը աղջիկ-ժողոտանի՝ *աղջիկների հավաքույթ է կազմակերպվել*[109]*։ Խիանում միաժամում ծոմ պահող երիտասարդներին չորեքշաբթի երեկոյան՝ ժամերգությունից հետո, այցելել են ազգականները, կերակուր տարել, շնորհավորել, ծոմը շարունակելու կարողություն եւ սրտի փափագի իրականացում մաղթել*[110]*։*

Ծոմը լուծվել է կա՛մ ալյուրի *(հացահատիկի) հումքով պատրաստված քաղցրավենիք ուտելով, կա՛մ ջուր խմելով, կա՛մ մատաղով, կա՛մ եկեղեցական հաղորդությամբ։*

ա) Ծոմբաց՝ ծիսական ուտեստով։ *Հայտնի է, որ փոխինդը եւ դրանով պատրաստված խաշիլը Սբ. Սարգսի տոնին բնորոշ ուտեստներին էին*[111]*։ Բարեպաշտ մամիկները, կանայք, աղջիկները Սբ. Սարգսի պահքի առաջին երեք օրերը՝ կիրակի կեսգիշերից մինչեւ չորեքշաբթի երեկո, ծոմ են պահել, եւ օրական երեք անգամ քառասունական ծնրադրում արել ու աղոթել (Քառասնից մանկանց տոնի ծնրադրության ծեսն է հիշեցնում*[112]*— Հ. Ա.)։ Չորեքշաբթի երեկոյան ցորենի բոված ալյուրից եւ խաղողի ռուպից անուշեղեն՝* ղայութ *են պատրաստել*[113]*։ Մարաշում Սբ. Սարգսի տոնին մի շաբաթ պաս են բռնել, որի առաջին երեք օրերը՝ ծոմով, իսկ չորեքշաբթի այն լուծել են ռուպով պատրաստած դահինե հրուշակով եւ շա-*

---

[109] *Տե՛ս, օրինակ, Տեղեկագրություն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ... , էջ 186–187,* Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ, *նշ. աշխ., էջ 404,* ԵՐ. ՇԱՀԱԶԻԶ, *Նոր Նախիջեւանը եւ Նոր-Նախիջեւանցիք. Ծէսեր եւ սովորութիւններ, Աշ, գք. Թ., Թիֆլիս, 1902, էջ 17,* ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ, *նշ. աշխ., էջ 53–54,* Ա. ԱԼՊՕՅԱՃԵԱՆ, *Պատմութիւն Եւդոկիոյ հայոց, էջ 1526,* Մ. ՍԻՍԵՌԵԱՆ (Մ. ՈՒԼՆԵՑԻ), *նշ. աշխ., էջ 202։*

[110] Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ, *նշ. աշխ., էջ 404։*

[111] *Տե՛ս, օրինակ,* Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, *նշ. աշխ., էջ 42։*

[112] *Առաջավորաց պահքի ընթացքում Քառասնից մանկանց ծես հիշեցնող մեկ այլ ծես տե՛ս* Մ. ԴԱՆԻԷԼԵԱՆ, *նշ. աշխ., էջ 406։ Հմմտ.* Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, *«Քառասուն մանկունք»ի ծիսառասպելաբանական առումները, Հայ ազգաբանության եւ հնագիտության խնդիրներ,* II, *խմբագիրներ՝* Դ. ՎԱՐԴՈՒՄՅԱՆ *եւ այլք, Երեւան, 2003, էջ 57–60։ Ուշագրավ է այն, որ ինչպես յոթշաբաթյա Մեծ պահքի կեսին՝ չորրորդ շաբաթվա ընթացքում Միջինքի չորեքշաբթիից մինչեւ շաբաթ-կիրակի որոշակիորեն տոնական շրջան է եղել (այս մասին տե՛ս* Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, *Միջինքի եւ Սեբաստիայի Քառասնից մանկանց տոները հայոց եկեղեցական եւ ժողովրդական տոնացույցերում, «Պատմաբանասիրական հանդես», 2019, 3, էջ 212–232), այնպես էլ մի շարք վայրերում Սբ. Սարգսի պահքի չորեքշաբթի է ծոմը լուծվել, ապա վերսկսվել, կամ միայն պահքն է շարունակվել։*

[113] ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ, *նշ. աշխ., էջ 50–51։*

քարախառն դահին-հացով[114]: Արճակում երկուշաբթիից ծոմ են պահել, չորեքշաբթի ճաշին մեկ անգամ կերել, ապա ծոմը շարունակել մինչեւ ուրբաթ երեկո[115]:

բ) Ծոմբաց՝ խաչմեր[116] խմելով: *Սսում Սբ. Սարգսի պասին ծոմ պահածներն այն լուծել են չորեքշաբթի՝ նույն օրվա ժամերգության ժամանակ կատարված ջրօրհնեքին օրհնված ջրով[117]: Մարաշում Առաջավորաց պահքի երկուշաբթիից սկսած՝ աղջիկները եւ տարեց կանայք երեք օր ծոմ են պահել, ապա լուծել՝ չորեքշաբթի առավոտ եկեղեցում* խաչմեր *խմելով[118], եւ տուն դառնալով՝ կերել են* ալլա հոց *(առանց աղի եւ թթխմորի հաց) կամ* փէխանդ *(«ոոփ ապուր»[119]), որը Սբ. Սարգիսի տոնին նշանավոր փոխինդով խաշիլն է[120]: Առաջավորաց պահքի ընթացքում կամ ավարտին ջուր օրհնելու մասին եկեղեցական կանոնական հրահանգ չի հանդիպում, ուստի բերված օրինակները, ըստ ամենայնի, տեղային բնույթ են կրել եւ բխել են ժողովրդական սովորույթից: Այդ են վկայում ստորեւ բերված օրինակները, որոնցում Սբ. Սարգսի պահքը լուծվել է ջրով, սակայն ոչ թե եկեղեցում օրհնված, այլ՝ սրբավայրի տարածքում եղող:*

Դերսիմում աղջիկ կամ տղա սիրելիի հետ ամուսնանալու ակնկալիքով Սբ. Սարգսի շաբաթը պահք ու ծոմ պահելուց հետո բարձրացել են

---

[114] Ե. Տէր Ղազարեան, *Մարաշահայ բարքեր, «Բազմավէպ», Վենետիկ-Ս. Ղազար, հտ. ՃԺԱ, 1953, Յունիս-Յուլիս, թիւ 6–7, էջ 128–129:*

[115] Ս. Ավագեան, *Արճակ, ՀԱԲ, պր. 8, Երեւան, 1978, էջ 92:*

[116] *Խաչմայրը նշանակում է խաչով օրհնված ջուր (տե՛ս ՀԼԲԲ, հտ. Բ., էջ 288) եւ խաչալվայի ջուր (տե՛ս Հր. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, էմինեան ազգագրական ժողովածու, Թ., Թիֆլիս, 1913, էջ 454): Խաչալվան եւս նշանակում է խաչով լվացված, օրհնված ջուր (տե՛ս* Նարեկ վրդ. Ավագեան, *Հանդերի՝ կարկուտից պահպանմանն ու բերքի առատ լինելուն նվիրված եկեղեցական կանոնները, «Էջմիածին», 2019, Ը., էջ 25): Եկեղեցում բերքի, առողջության համար ջրի օրհնության կանոնները, Ջրօրհնեքի արարողությունից սկսած, անվանվել են խաչալվա (Անդ, էջ 22): Խաչալվան, որը կոչվում է նաեւ Խաչահանգիստ, նաեւ բժշկության նպատակով են կիրառում (տե՛ս* Ստեփանոս ա՛ր. քահն. Մանդինեանց, *Աստուածապաշտութիւն Հայաստանեայց Ուղղափառ Եկեղեցւոյ, ի Վաղարշապատ, 1872, էջ 117):*

Եկեղեցին ունի խաչալվայի համար սահմանված կանոն, որը կա մեզ հասած հնագույն՝ Ժ. դարով թվագրվող Մաշտոցում (տե՛ս Մայր Մաշտոց, *Ժ. դար, հտ. Ա., Գիրք Ա., Ըստ հնագոյն երկաթագիր ձեռագրերի եւ համեմատութեամբ Աստուածաշունչ մատեանի, բնագրական եւ կանոնացանկային յաւելուածովք, աշխատասիրութեամբ՝* Գ. Տէր-Վարդանեանի, *Սբ. Էջմիածին, 2012, էջ 416–420, 807):*

[117] Մ. Քէլէշեան, *նշ. աշխ., էջ 525:*

[118] Յ. Մ. Վարժապետեան, *Մարաշի մէջ նշանաւոր օրեր իրենց ծէսերով, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1898, 27 օգոստոս, էջ 523:*

[119] Գր. Գալուստեան, *նշ. աշխ., էջ 334:*

[120] Գր. Գալուստեան, *նշ. աշխ., էջ 334,* Հ. Խառատեան, *Հայ ժողովրդական տոները, էջ 69:*

Տուժիկ պապա լեռան անմատչելի ապառաժներում կառուցված Սբ. Սարգսի վանք եւ մոտից բխող Դանիէլ հազրեթի խըզըրի *կամ Սբ. Սարգսի ամենազոր աղբյուրի սրբազան ակից ջուր խմել*[121]*։ Օձնեցիներն էլ Սբ. Սարգսի տոնին գնացել են Մտի գլխի Սբ. Սարգսի խաչը՝ ուխտ անելու։ Այնտեղ ջուր են լցրել խաչի վրա եւ այդ խաչալվայի ջրով ու մեղրով փոխինդից կլոնդակ են պատրաստել։ Դրանով եւ իրենք են թաթախվել, եւ ընտանիքի անդամների համար են տարել*[122]*։ Ուշագրավ է, որ խաչալվա նշանակում է նաեւ օրհնված ջրով պատրաստված ուտելիք կամ խմելիք*[123]*, ինչպես նաեւ ուխտատեղիից բերված քաղցրավենիք*[124]*, որով, փաստորեն, ծոմը լուծել են։*

Ինչպես տեսնում ենք, ծոմը լուծվել է կամ քաղցրավենիքով, կամ խաչմեր խմելով, կամ այդ քաղցրավենիքը հենց խաչմերով է պատրաստվել։

գ) Ծոմբաց՝ մատաղով։ *Զեյթունում նույնիսկ տարեցները Սբ. Սարգսի երկուշաբթիից մինչեւ շաբաթ երեկո ծոմ են պահել ու շաբաթ երեկո ծոմը բացել են՝ ոչխարի կամ այծի մատաղ բաժանելով աղքատներին եւ Հաղորդություն ճաշակելով*[125]*։ Սպահանի Փերիա գավառում ում նույնպես Սբ. Սարգսի տոնին եկեղեցու բակում մատաղ եւ հարիսա են արել եւ բաժանել*[126]*։*

դ) Ծոմբաց՝ չորեքշաբթի հաղորդություն ստանալով։ *Հանդիպում է նաեւ Սբ. Սարգսի առաջին երեք օրերի ծոմը հաղորդությամբ լուծելու դրվագ, երբ կանայք, երեք օր ծոմ պահելուց հետո, չորեքշաբթի երեկոյան գնացել են եկեղեցի՝ հաղորդություն ստանալու*[127]*։ Երիտասարդ աղջիկները, ինչպես հայկական մյուս գավառներում, այնպես եւ Զեյթունում, մինչեւ չորեքշաբթի կեսօր ծոմ են պահել, ապա ժամ են գնացել, խոստովանել եւ սրբություն առնելով (հաղորդություն ստանալով*[128]*.— Հ. Ա.)՝ տուն*

---

[121] *ՀԱԻ արխ., Գ. Հալաջյանի ֆոնդ, էջ 1245, 1248։*

[122] *Տե՛ս* Ե. Լալայեան, *Բորչալուի գաւառ. Նշանաւոր տօներ, ԱՀ, գք. Ժ., էջ 256։*

[123] *Տե՛ս ՀԼԲԲ, հտ. Բ., էջ 286։*

[124] *Տե՛ս* Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. Ա., Երեւան, 1976, էջ 564։*

[125] Մ. Սիսեռեան (Մ. Ուլնեցի), *Պատմութիւն Զէյթունի (1409–1921), Լիբանան, 1996, էջ 202։*

[126] Ա. Երեմեան, *նշ. աշխ., էջ 116։*

[127] Ա. Ալպոյաճեան, *Պատմութիւն Հայ Կեսարիոյ (տեղագրական, պատմական եւ ազգագրական ուսումնասիրութիւն), հտ. Ա., Գահիրէ, 1937, էջ 781։*

[128] *Սրբություն առնել նշանակում է հաղորդվել (տե՛ս ՀԼԲԲ, հտ. Ե., Երեւան, 2008, էջ 393)։*

դարձել[129]։ Սեբաստիայում, երկուշաբթի օրվանից սկսած, հարսնացուն երեք օր ծոմ է պահել եւ չորեքշաբթի օրն ընկերուհիների եւ մոր ուղեկցությամբ գնացել եկեղեցի՝ Հաղորդություն առնելու[130]։ Հարկ է նշել, որ եկեղեցական ծիսակարգում Առաջավորացի չորեքշաբթի օրը Պատարագ մատուցելու եւ Հաղորդություն բաշխելու ավանդույթ չկա, եթե այդ օրը չի զուգադիպում Տերունական կամ սուրբի տոնին։ Հետեւաբար՝ վերն ասվածը, ըստ ամենայնի, մասնակի եւ տեղային բնույթ է կրել։

Այսպիսով՝ ժողովրդական կենցաղում Սբ. Սարգսի պասը, անկախ այն բանից, չորեքշաբթի է ավարտվել, թե շաբաթ, լուծվել է ալյուրի հումքով պատրաստված քաղցրավենիքով (փոխինդ, հալվա), ջրով, մատաղով եւ Սբ. Հաղորդություն ստանալով։ Որոշ դեպքերում դրանք հաջորդել են միմյանց, որոշ դեպքերում՝ միայն մեկն է եղել։ Փոխինդը կամ հալվան, ջուրը եւ կենդանական մատաղը, որոնցով պահքը լուծել են, զոհաբերություն-հաղորդություն են, որոնք ցուցում են տոնի՝ երկրագործական եւ անասնապահական տնտեսաձեւերի համար՝ բարեհաջող տարի լինելը։ Այդ համապատկերում ուշագրավ է այն, որ որեւէ ուխտատեղիի տոնի օրը այդ եկեղեցու հատակի տակը գինի կամ ձու պահել։ Այդ երեւույթը եւս խաչալվա է կոչվել։ Երբ խաչալվան պահող ուխտավորները հաջորդ տարի կրկին գնացել են, այն հանել են, սկզբում իրենք են կերել կամ խմել, հետո բաժանել են, որպեսզի իրենց ուխտն ընդունելի լինի[131]։ Այստեղ ձուն առնչվում է անասնապահական մշակույթին, գինին՝ երկրագործական։

Սբ. Հակոբի ծոմ։ Սբ. Հակոբ Մծբնա Հայրապետի հիշատակի օրը սահմանված է դեկտեմբերի 12-ից 18-ը հանդիպող շաբաթ օրը[132]։ Տոնին նախորդող շաբաթապասը վկայված է 1292 թ. Ստեփանոս Գոյներիցանցի խմբագրած Տօնացոյցում[133]։ Շաբաթապասի ընթացքը նման է Սբ. Սարգսի տոնին նախորդող շաբաթապասի ընթացքին։ Մասնավորաբար հետաքրքրական է այն, որ ինչպես Սբ. Սարգսի պահքն է խաչմեր խմելով լուծվել, այնպես եւ՝ Սբ. Հակոբինը։ Այսպես. Մարաշում Սբ. Հակոբի

---

[129] Մ. Սիսեռեան (Մ. Ուլնեցի), նշ. աշխ., էջ 202։

[130] Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ եւ անոր կուսակալութեան ներքեւ գտնուող մէկ քանի գլխաւոր քաղաքաց, աշխատասիրեաց Պօղոս վրդ. Նաթանեան, Կ. Պոլիս, 1877, էջ 186–187։

[131] Յ. Նաջարեանց, Նախապաշարմունք, Տփխիս, 1878, էջ 61։

[132] Տ. Թորգոմ Պատրիարք, Սուրբք եւ տօնք Հայաստանեայց եկեղեցւոյ, Երուսաղէմ, 1957, էջ 31։

[133] Տե՛ս Ռ. Վարդանեան, նշ. աշխ., էջ 484։

(Էկիւբ) պահքի ժամանակ մեկ, երեք կամ հինգ օր են պահք բռնել։ Առավոտյան եկեղեցի են գնացել եւ խաչմեր խմելով՝ պահքը բացել[134]։

Մյուս ընդհանրությունը ծոմբացն է։ Բալուում Սբ. Սարգսի եւ Սբ. Հակոբի շաբաթապասերի ընթացքում մասնավորապես կանայք, հարսները եւ չափահաս աղջիկները երկուշաբթի օրվանից սկսյալ, մինչեւ չորեքշաբթի կեսօր, եւ չորեքշաբթի կեսօրից մինչեւ ուրբաթ երեկո պահք են պահել, այսինքն՝ երկուսուկես օր բնավ չեն ճաշել եւ ջուր չեն խմել։ Միակ ճաշը չորեքշաբթի կեսօրին է եղել։ Ապա հրավիրել են դրացի եւ ազգական կանանց, ովքեր պահոց կերակուրներ վերցնելով՝ ծոմապահի տուն են գնացել եւ միասին ճաշել։ Այս ճաշն անվանել են ծոմբաց (ծոմփաց)[135]։ Մարաշում Սբ. Հակոբի տոնին ծոմապահ աղջիկներին նշանածի տնից մի սկուտեղ հրուշակ (հէլվա), ղարչին (՝ Մարաշին հատուկ ոտնաման) եւ գուլպա են ուղարկել՝ որպես նվեր[136]։ Սբ. Հակոբի պահքի չորեքշաբթի ռուպով պատրաստված ապուր եւ դահինե հրուշակ են կերել, որից ուղարկել են նաեւ բարեկամներին[137]։

Հաջորդ զուգահեռը կարելի է անցկացնել Սբ. Սարգսի եւ Սբ. Հակոբի տոների ժամկետների միջեւ։ Եթե առաջինը, լինելով հունվարի վերջին եւ փետրվարին, նախորդում է գարնանամուտին՝ գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման շրջանին, ապա երկրորդը, լինելով դեկտեմբերին, նույն աշխատանքների ամփոփման շրջանում է (այդ են վկայում նաեւ Սբ. Հակոբի պահքի անվանումները՝ Ձմեռնամուտի (այսպես է կոչվում, քանի որ չորս եղանակային պահքերից մեկն է[138]) եւ Նախրաթողի (քանի որ տնտեսական տարին փակվում էր, եւ ցրտի պատճառով նախիրն այլեւս արոտ չէին տանում[139])։

Նկատի առնելով տնտեսական տարվա մեկնարկին եւ ամփոփման շրջանում հանդիպող ջրին առնչվող ծեսը, ի դեմս ծոմապահության (ըն-

---

[134] *Տե՛ս* Յ. Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, *Մարաշի մէջ նշանաւոր օրեր իրենց ծէսերով, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1898, 24 սեպտեմբեր, էջ 586,* Գ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ, *նշ. աշխ., էջ 344,* Ե. ՏԷՐ ՂԱՋԱՐԵԱՆ, *նշ. աշխ, էջ 127։*

[135] *Բալու..., էջ 438–439։*

[136] *Տե՛ս* Յ. Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ, *Մարաշի մէջ նշանաւոր օրեր իրենց ծէսերով, «Բիւրակն», Կ. Պոլիս, 1898, 24 սեպտեմբեր, էջ 586,* Գ. ԳԱԼՈՒՍՏՅԱՆ, *նշ. աշխ., էջ 344,* Ե. ՏԷՐ-ՂԱՋԱՐԵԱՆ, *նշ. աշխ, էջ 127։*

[137] Ե. ՏԷՐ ՂԱՋԱՐԵԱՆ, *նշ. աշխ., էջ 127։*

[138] *Տե՛ս* Ա. ՂԱՋԱՐՅԱՆ, *նշ. աշխ., էջ 844։*

[139] Հ. ԽԱՌԱՏՅԱՆ, *Հայ ժողովրդական տոները, էջ 246։*

թացքում ջուր չեն խմում) եւ ծոմալուծության (ծոմը ջրով են լուծում), կարող ենք ենթադրել, որ այն կապված է անհրաժեշտ քանակությամբ ջուր ունենալու հետ, ինչով էլ պայմանավորված է երկրագործական եւ անասնապահական տարեշրջանի բարեբերությունը (հարկ է նշել, որ Սբ. Սարգսի տոնական ուտեստ փոխինդը, հալվան եւ Սբ. Հակոբի տոնական ուտեստ հարիսան[140], եւս առնչվում են տնտեսական տարվա բարեբերությանը)։ Երկու սուրբերը եւ նրանց տոներն առնչություն ունեն ջրի հետ. Սբ. Սարգսի տոնի ժամանակ չի կարելի գլուխ լվանալ, լվացք անել[141], ծոմչեքի մաս է կազմում բաղնիքը[142], իսկ Սբ. Հակոբի կերպարը (նաեւ՝ նրան առնչվող ուխտավայրերը) մեծապես կապված են ջրի, երաշտի եւ անձրեւաբերության հետ[143]։

Այսպիսով՝ ինչպես մի շարք տոների եւ ծեսերի, այնպես եւ Սբ. Սարգսի ու Սբ. Հակոբի ծոմապահության մեջ երկու մշակույթ է միախառնվել՝ մինչքրիստոնեական եւ քրիստոնեական, ինչը դրսեւորվում է ծոմից դուրս գալիս օրհնված ջուր խմելով, ծիսական ուտեստի ճաշակմամբ եւ Սբ. Հաղորդություն ստանալով։

Վարդավառի ծոմ։ Վերը տեսանք, որ Դավիթ Ալավկա Որդին ծոմապահություն է հորդորել ոչ միայն Զատկի, այլ նաեւ Վարդավառի եւ Ծննդյան տոներին նախորդող հիսնակաց պահքերի ընթացքում։ Հատկանշական է, որ ազգագրական նյութերում ծոմապահության դրվագներ հանդիպում են նաեւ Վարդավառին նախորդող քառասնորդաց (հիսնակաց) պահքի ընթացքում։

Մեզ հանդիպած դրվագում Վարդավառի ծոմապահությունը հիշեցնում է Սբ. Սարգսի ծոմապահությունը։ Առաջին դեպքում Վարդավառի նախորդ օրը չամուսնացածները չափից ավելի աղի (շոռ) ուտելիք են օգտագործել եւ ցերեկը ջուր չեն խմել՝ երազում սիրելիի ձեռքից ջուր ստանալու ակնկալիքով[144]։ Երկրորդ օրինակը վերաբերում է ԺԴ. դարի կեսերին, երբ միայնակյացը Սբ. Սարգսից մինչեւ Վարդավառ ջուր չի խմել.

---

[140] Անդ, էջ 246։

[141] Տե՛ս Ս. Մկրտչյան, նշ. աշխ., էջ 43։

[142] Տե՛ս, օրինակ, Տեղեկագրութիւն ընդհանուր վիճակին Սեբաստիոյ..., էջ 186–187։

[143] Այս մասին տե՛ս Լ. Սիմոնյան, Սբ. Հակոբ Մծբնա Հայրապետի հիշատակը հայոց մեջ, Երեւան, 2022, էջ 52–57, 67–148, 159–162։

[144] ՀԱԻ արխ., Հ. Հայրապետյանի ֆոնդ, Սիսիանի շրջանի Շաղաթ գյուղի պատմությունը եւ ապրելակերպը (1828–1928 թթ.), Գործ 2, 1982, էջ 131։

«Մաղաքիա Ղրիմեցին իր տեսակին մէջ յատուկ դէմք մըն է, ... միս ոչ եկեր եւ գինի ոչ էարբ, որ Սբ. Սարգսի տօնէն մինչ ի տօն Վարդավառին ջուր ոչ էարբ, որ ի մեծի պահոցն՝ կիւրակիէ միայն փոշեջուր ճաշակէր»[145]*։*

Եթե Սբ. Սարգսի պահքը, փետրվարին լինելով, ձյան առատ տեղումների շրջան է, ապա Վարդավառը տարվա ամենատաք շրջանն է, երբ երաշտի դեպքում կարող է լինել խիստ չորային, ուստի ըստ երեւույթին անձրեւ առաջացնելու նպատակով է ջրի ծոմ պահվել[146]*։ Այս ծիսական փոխկապակցվածությունը կարո՞ղ է բացատրվել նրանով, որ հունվար-փետրվարին տեղացած առատ ձյունը ջրի անհրաժեշտ պաշար կարող էր ապահովել տարվա ամենատաք եւ գյուղատնտեսական աշխատանքների գործուն շրջանում՝ հուլիսին։ Վարդավառին հազվադեպ հանդիպող ծոմապահությունը զուգահեռներ ունի Սբ. Սարգսի ծոմապահության հետ ծիսական եւ ժամկետային առումներով։*

Այսպիսով՝ ժողովրդական տոնացույցում առկա ծոմապահության ժամկետներից Սբ. Սարգսի, Սբ. Հակոբի եւ Վարդավառի տոներին նախորդող ծոմապահքերն առնչվում են ջրի հետ՝ ժամկետներով, համանման ընթացքով, լուծման եղանակներով։

Շարունակությունը՝ հաջորդիվ

---

[145] Մաղաքիա Արք. Օրմանեան, *Ազգապատում, հտ. Բ., էջ 2301։*

[146] *Անձրեւ առաջացնելու նպատակով ծոմապահության սովորույթ եղել է տարբեր ժողովուրդների մոտ (տե՛ս* Ջ. Ֆրեզեր, *Ոսկե ճյուղը, Երեւան, 1989, էջ 79–80,* Э. Тэйлор, Первобытная культура, перевод с английского под редакцией В. Никольского, Москва, 1939, *էջ 417–418)։*